«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24-01/02/

ք.Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 23.08.2018թ.ժամը 16.00

Համաձայն, 21.06.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հունիսի 29-ին ՀՀ կառավարության աշխատակազմից թիվ 02/13.3/13206-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահացեագրված, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 08.08.2018թ-ին ստացված «Արտեզիանիկա» ՍՊԸ-ի տնօրեն Ն.Կաղինյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանի գործողությունների /անգործության/ փաստի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ս/թ-ի Օգոստոսի 23 -ին ժամը 16.00-ին՝ հետաձգված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
«Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանը
Դիմումատու՝ «Արտեզիանիկա» ՍՊԸ-ի տնօրեն Ն.Կաղինյանը
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողական ծառայություն

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝ «Արտեզիանիկա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝Արմեն Գրիգորյան
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Էմին Աբգարյան
«Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանը նախապես ծանուցվել էր նիստի օրվա և ժամի մասին, սակայն նիստին չէր ներկայացել

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ
Համաձայն, 21.06.2018թ. գրությամբ՝ ՀՀ վարչապետին հասցեագրված և 2018թ-ի հունիսի 29-ին ՀՀ կառավարության աշխատակազմից թիվ 02/13.3/13206-18 գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն վերահացեագրված, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 08.08.2018թ-ին ստացված «Արտեզիանիկա» ՍՊԸ-ի տնօրեն Ն.Կաղինյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, «Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարիչների վարքագծերի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ նախորդ նիստը հետաձգվել էր՝ հաշվի առնելով այն փաստը, որ Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանի բացակայության պայմաններում մի շարք հարցեր մնում էին չպարզաբանված:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց, որ սնանկության գործով կառավարչի կողմից հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել կառավարչի կողմից ՀՀ Արդարադատության նախարարություն ներկայացված պատասխանը դիմումի հետ կապված փաստերի վերաբերյալ,Դատարանի 21.03.2018թ-ի թիվ ԵԿԴ/0153/04/15 որոշման լուսապատճենը,միջնորդության,20.03.2018թ-ի ժողովի արձանագրության,քվեաթերթիկի,արձանագրության,էլեկտրոնային ծանուցման և դիմումների լուսապատճենները: Հանձնաժողովի նախագահն նշեց նաև,որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.4-րդ կետի համաձայն, հանձնաժողովի նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված սնանկության գործով կառավարչի և/կամ այլ անձնաց բացակայությունը արգելք չէ կառավարչի նկատմամբ հարուցված կարգապահական խախտման քննարկման համար և առաջարկեց նիստը շարունակել առանց սնանկության գործով կառավարչի, քանի որ պատշաճ ծանուցումը եղել է ապահովված:

Հանձնաժողովի նախագահն հայտնեց նաև այն դիրքորոշումը, որ ներկայացված դիմումբողոքը իր մեջ պարունակում է սնանկության գործով կառավարչի կողմից լիազորությունների ոչ պատշաճ կատարման մասին տեղեկատվություն, որի պատճառների և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ պարզաբանումներ կարող են ստանալ կարգապահական վարույթի շրջանակներում:

Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն կարծիքին,որ կառավարչի կողմից ներկայացվել է համապատասխան դիրքորոշում և համապատասխան փաստաթղթեր և այդ պարագայում կարելի նիստը անցկացնել առանց սնանկության գործով կառավարչի ու համաձայնեցին նաև կարգապահական վարույթի հարուցման հետ,որի շրջանակներում միան կարող են քննել հանգամանքները և ապացույցները:

Հանձնաժողովի նախագահն վարույթ հարուցելու հարցը դրեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 5
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ
«Արտեզիանիկա» ՍՊԸ-ի տնօրեն Ն.Կաղինյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝08.08.2018թ-ին ստացված դիմումի հիմքով՝ «Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, եզրակացության գալու նպատակով,հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.6-րդ կետի համաձայն ձայնի իրավունք տրվեց «Արտեզիանիկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Արմեն Գրիգորյանին,ով իր ներկայացված դիմումը համառոտ ներկայացրեց և ասաց, որ ավելացնելու ոչինչ չունի:

Դիմումատուին հարց ուղղելու համար ձայնի իրավունք խնդրեց Ռուբեն Խալաթյանը և հարցրեց դիմում նշված այն փաստի վերաբերյալ,որ իրենք պատրաստ են եղել գնել լոտը 800 մլն դրամով,բայց նախապատվությունը տրվել է այլ կազմակերպության՝220 մլն.դրամին,այն դեպքում երբ կառավարչի ներկայացրած,ձեր կողմից 13.03.2018թ-ին դատարան ներկայացված դիմումում նշելեք 220 մլն դրամը,որպես գնման գնային առաջարկ:

Դիմումատուի ներկայացուցիչը պատասխանեց,որ 800 մլն դրամը եղել է աճորդային ավաճառքի սակարկություններում իրենց ընկերության առաջարկը,որը հաղթող չի ճանաչվել:

Հանձնաժողովի անդամ՝Արմենակ Ադամյանը հարցրեց դիմումատուին այն մասին թե արդյոք իրենց կողմից բացի սույն դիմումի կատարվել են դատական կարգով բողոքարկումներ:

Դիմումատուն պատասխանեց,որ իրենց կողմից դատական կարգով բողոքարկվել է ժողովի արձանագրությունը և վերաքննության կարգով բողոքարկվել է՝Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 21.03.2018թ-ի ԵԿԴ/0153/04/15 որոշումը:

Ելույթի համար ձայն վերցրեց հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը և մասնավորապես նշեց,որ ներկայացված դիմում նշված փաստական հանգամանքները,հիմնականում վերաբերվում են կառավարչի կողմից իրականացված պարտատերերի ժողովին և ժողովի արդյունքներին,որի/ժաղովի արձանագրության/ հիմքով 21.03.2018թ-ի կայացվել է թիվ ԵԿԴ/0153/04/15 որոշումը,այսինքն ինչ հիմա դիմումատուն խնդրում է կատարել՝այն է փաստական հանգամանքների գնահատում,դա արդեն կատարվել է դատարանի կողմից և դրա հիմքով առկա է դատարանի որոշում,որը կարող է միայն բողոքարկվել վերքննության կարգով,որը և դիմումատուի կողմից կատարվել է,իսկ ինչ վերաբերվում է արդեն դատարանի կողմից գնահատված ապացույցին,այսոր հանձնաժողովի նիստում կրկնակի գնահատական տալուն,ապա դա չի բխում որևէ օրենքի պահանջներից և ավելին հակասում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքի սահմանած նորմերին:

Այսինքն ներկա պահին դիմումի հարցապնդումը,այն է՝

-...ԵԿԴ/0153/04/15 սանկության գործով լոտ 5-ի վերաբերյալ սնանկության գործով կառավարչի կողմից 20.03.2018թ-ին պարտատերերի ընդհանուր ծողովն իրականացվել է Օրենքի խախտմամբ,որի արդյունքում կայացված որոշումն էլ չի կարող համարվել օրինական:

չի կարող քննարկվել «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստում հանձնաժողովի նման իրավասություն չունենալու հիմքով,քանի որ դատարանում քննարկված և գնահատված փաստական հանգամանքը կամ ապացույցը որը հաստատված է դատական ակտով կարող է միայն քննարկման առարկա դառնալ բողոքարկման ժամանակ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում,օրենքով սահմանված կարգով:

Արդարադատության նախարարության ներկայացուցիչ Էմին Աբգարյանը նշեց, որ ՀՀ Արդարադատության նախարարությունը ևս պատասխան է ներկայացրել է «Արտեզիանիկա» ՍՊԸ-ին և արտահայտեց այն կարծիքը, որ առկա է կայացված դատական ակտ և «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովը իրավասու չէ վերանայելու դատարանի կողմից կայացված դատական ակտը:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը ներկայացրեց նաև «Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանի կողմից պատասղանին կցված Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.03.2018թ-ի «Յունիֆիշ»ՍՊԸ-ի գույքն ուղղակի գործարգով օտարելը թույլատրելու մասին ԵԿԴ/0153/04/15 որոշումը և նշեց, որ կա արդեն իսկ կայացված դատական ակտ և «Քաղաքացիական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ինչպես նաև դատարանի պահանջները կատարման համար պարտադիր են դրանց հասցեատերերի համար և ենթակա են կատարման ՀՀ_ի ամբողջ տարածքում: Ինչպես նաև նշեց, որ «Քաղաքացիական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքի 361-րդ հոդվածում նշված են այն դատական ակտերը, որոնք ենթակա են վերանայման Վերաքննիչ դատարանի կողմից և արտահայտեց այն կարծիքը, որ այստեղ կա լիազորությունների շրջանակի հետ կապված խնդիր, և Կարգապահական հանձնաժողովը չի կարող դատարանի կողմից արդեն իսկ գնահատված ապացույցների հիման վրա կայացված որոշումը վերանայել կամ վերագնահատել:

Կարգապահական հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը ևս արտահայտեց այն կարծիքը, որ առաջին ատյանի դատարանի կողմից կայացված ակտը կարող է վերանայվել միայն Վերաքննիչ դատարանի կողմից:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ՝Տիգրան Հարությունյանը առաջարկեց կարճել «Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը, քանի որ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական

հանձնաժողովի լիազորություններից դուրս է քննելու և գնահատելու ապացույցներ,որոնք արդեն քննվել են դատարանի կողմից և որի հիմքով կայացվել է դատական ակտ,լիազորություններից դուրս է նաև վերանայել դատարանի կողմից կայացված որոշումը:

Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այդ կարծիքին և հանձնաժողովի նախագահն առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 5

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1.«Արտեզիանիկա» ՍՊԸ-ի տնօրեն Ն.Կաղինյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 08.08.2018թ-ին ստացված դիմում-բողոքի հիմքով, «Յունիֆիշ»ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ՝ Հարություն Ղարիբյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել, քանի որ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի լիազորություններից դուրս է քննելու և գնահատելու ապացույցներ,որոնք արդեն քննվել են դատարանի կողմից և որի հիմքով կայացվել է դատական ակտ,լիազորություններից դուրս է նաև վերանայել դատարանի կողմից կայացված ԵԿԴ /0153/04/15 որոշումը:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

3.Սույն եզրակացությունը հրապարակել Կազմակերպության ինտերնետային կայում եռօրյա ժամկետում:

Հանձնաժողովի Նախագահ՝Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան